

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

ԱՄՆ-ից ստացվել է Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամյանի դրվատական խոսքը պրոֆեսոր Էդ. Մինասյանի «Հայաստանի երրորդ Հանրապետությունը» գրքի մասին: Գրությունը բերում ենք ամբողջությամբ:

Մեծայարգ
Տիար Էդիկ Մինասեան
Երևան

Յարգելի Տիար Մինասեան.

Խորին շնորհակալութեամբ ստացած ենք «Հայաստանի Երրորդ Հանրապետութեան Պատմութիւն» ձեր մենագրութիւնը, զոր ազնուաբար մակագրած էիք մեր անունին:

Գլխատրաբար Հայաստանի երրորդ Հանրապետութեան եւ նաեւ Արցախի Հանրապետութեան ամբողջական եւ մանրամասնեալ պատմութիւնը, մինչեւ օրս, ներկայացուցած էք հարազատութեամբ. փաստարկութեամբ եւ բազմաթիւ հաւաստի աղբիւրներ օգտագործելով: Այնտեղ տրուած են ժամանակի տիրող պայմանները, մեր հայրենակիցներու հոգեբանութիւնը, մտայնութիւնն ու շարժառիթները:

Կը շնորհատրենք ձեզ՝ ձեր այս պատմական տուեալներով հարուստ մենագրութեան համար եւ ձեզի կը մաղթենք կեանքի երկար ու երջանիկ օրեր՝ որպէս զի նոր հրատարակութիւններով առաւել եւս ճոխացնէք մեր ժողովուրդի գրական ու պատմական անդաստանը:

Աղօթարար՝

Խաժակ Արք. Պարսամեան

Խաժակ Արք. Պարսամեան

Առաջնորդ